№ 5 (9)

ISSN 1829-4820



Филиал МГУ имени М.В.Ломоносова
в г. Ереване

Журнал входит в список
периодических изданий ВАК РА

ՌՈՒՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Գիտամեթոդական հանդես

ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОЙ РУСИСТИКИ

Научно-методический журнал

MAIN ISSUES IN MODERN RUSSIAN STUDIES

Scientific Methodological Journal

ЕРЕВАН 2020

Երևան քաղաքում Մոսկվայի Մ.Վ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի մասնաճյուղ

Филиал Московского государственного университета им. М.В. Ломоносова в г. Ереване

M. Lomonosov Moscow State University, Yerevan branch

ՌՈՒՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Գիտամեթոդական հանդես

ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОЙ РУСИСТИКИ

Научно-методический журнал

MAIN ISSUES IN MODERN RUSSIAN STUDIES

Scientific Methodological Journal

5 (9)

ԵՐԵՎԱՆ 2020
ЕРЕВАН 2020
YEREVAN 2020

Երաշխավորվել է տպագրության Երևան քաղաքում Մոսկվայի Մ.Վ.Լոմոնոսովի անվան պետական համալսարանի մասնաճյուղի գիտական խորհրդի կողմից

Печатается по решению Ученого совета филиала Московского государственного университета им. М.В. Ломоносова в г. Ереване

Reprinted by decision of the Academic Council of the branch of the Moscow State University M.V. Lomonosov in Yerevan

«ՌՈՒՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ» գիտամեթոդական հանդեսի առաքելությունը ՀՀ-ում ռուսագիտության՝ որպես լեզվաբանության ճյուղի մասսայականացումն է, ռուսաց լեզվի ուսումնասիրման նկատմամբ հետաքրքրություն առաջացնելը, օտարերկրյա հետազոտողների ուշադրությունը հայ գիտնականների մշակումներին հրավիրելը, դրանով իսկ հայ ռուսագիտության մասսայականացումն է, համատեղ ծրագրերի, դրամաշնորհների մշակման հնարավորության ընձեռումը, մագիստրոսների ներգրավումը հետազոտական աշխատանքներին:

Назначение научно-методического журнала «**ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОЙ РУСИСТИКИ**» рассматривается нами в ракурсе популяризации в РА русистики как отрасли языкознания, привлечения интереса к изучению русского языка, привлечения внимания зарубежных исследователей к разработкам армянских ученых и тем самым популяризации армянской русистики, возможности разработки совместных проектов, грантов и пр., привлечения магистрантов к научно-исследовательской работе.

ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОЙ РУСИСТИКИ // Научно-методический журнал, №5 (9). / Глав. ред. Саркисян И.Р.; сост.: Акопян А.С. – Ереван: Изд-во МГУ, 2020. – 180 с.

ISSN 1829-4820

*Журнал входит в список периодических изданий **ВАК РА***

ORCID: 0000-0001-9263-6791

© Филиал МГУ им. М.В. Ломоносова в г. Ереване

Հասցե՝ ՀՀ, Երևան, Վարդանանց 17, հեռ՝ (+37411) 900 110 – 101, 102:
Наш адрес: РА, г. Ереван, ул. Вардананц 17; тел. (+37411) 900 110 – 101, 102.
Address: Vardanants St. 17, Yerevan, RA; tel.: (+37411) 900 110 – 101, 102.
Էլեկտրոնային փոստ՝ (электронная почта) e-mail: po@msu.am

СОВРЕМЕННЫЕ ПРОБЛЕМЫ ОБРАЗОВАНИЯ ВЗРОСЛЫХ В РЕГИОНЕ СЮНИК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

Армине Грачиковна Даллакян
dallaqyanarmine40@aspu.am

К.п.н., преподаватель кафедры педагогики,
зам. декана по учебной работе факультета начального образования
Армянский государственный педагогический
университет им. Хачатура Абовяна
Ереван, Республика Армения

АННОТАЦИЯ

В статье Сюник представлен крупным культурным центром начиная с 5-го века до наших дней. Проведен анализ имеющихся проблем образования взрослых на примерах городов региона: Мегри, Капан, Горис, Сисиан.
Ключевые слова: взрослый, формальное образование, неформальное образование, информальное образование, досуг, опрос.

Սյունյաց աշխարհը հայտնի է եղել իբրև միջնադարյան Հայաստանի մշակութային խոշոր կենտրոն: 5-րդ դարում՝ հայոց գրերի ստեղծումից հետո, Մեսրոպ Մաշտոցը, ծավալելով քարոզչական և լուսավորական գործունեություն, Վաղինակ և Վասակ Սյունի իշխանների աջակցությամբ Սյունիքի Գողթն գավառում բացում է դպրոցներ: Հետագայում՝ 5–8-րդ դարերում, կրթամշակութային գործը Սյունիքում նշանավորվել է շնորհիվ մի շարք գործիչների՝ եպիսկոպոս Անանիա Թարգմանիչ, քերթողներ Պետրոս Սյունեցի, Մաթուսաղա, Մովսես և ուրիշներ, ովքեր կանգնած են եղել Սյունյաց վարդապետարանի կրթական գործի գլխա-

վերևում՝ զբաղվելով դասավանդմամբ, թարգմանություններով և մեկնություններով: Անգամ արաբական տիրապետության տակ (8-րդ դար) Սյունիքի իշխանությունը կարողացել է պահպանել իր գոյությունը, ուժեղացնել և զարգացնել մշակութային ժառանգությունը. առանձնակի կարևոր է եղել եկեղեցու իրականացրած ազգապահպան գործունեությունը:

9-րդ դարից Սյունիքն ապրել է մշակութային վերելք. հիմնադրվել է Տաթևի վարդապետարանը, որը հետագայում դարձել է համահայկական մշակութային կենտրոն: Այստեղ հավասարաչափ զարգանում էին ինչպես ճշգրիտ գիտությունները, այնպես էլ բանահյուսությունը, հոգևոր և աշխարհիկ երգ-բանաստեղծությունը, վիպերգությունը և այլն: Տաթևում դասավանդել են աստվածաբանություն, փիլիսոփայություն, քերականություն, ճարտասանություն, տրամաբանություն, աստղաբաշխություն, տոմարագիտություն, երկրաչափություն, թվաբանություն և երաժշտություն [1: 476]:

Հռչակավոր է եղել 1280-ական թթ. հիմնադրված Գլաձորի համալսարանը (անվանել են «Երկրորդ Աթենք»), որն ունեցել է երեք մասնաճյուղ՝ երաժշտության, գրչության արվեստի և հասարակական-բնական գիտությունների: Ուշագրավ է, որ Սյունյաց պատմիչ Ստեփանոս Օրբելյանը Գլաձորի բարձրագույն դպրոցը անվանում էր «հիսուսական համալսարան»: Նկատենք՝ Գլաձորը նեղ վանական կամ եկեղեցական դպրոց չէր. այն հետևում էր երկրի հասարակական, քաղաքական և կրոնական անցուդարձերին, ակտիվ և վճռական մասնակցություն ունենում տեղի ունեցող հասարակական, քաղաքական, մշակութային իրադարձություններին: Գլաձորի համալսարանի բնույթն ու գաղափարախոսական ուղղվածությունը ինչպես հայ իրականության մեջ, այնպես էլ Եվրոպայում քրիստոնեական աստվածաբանությունն էր:

21-րդ դարում ևս Սյունիքը աչքի է ընկնում կրթամշակութային բարձր արժեքներով, որոնք փոխանցվել են նախորդ սերունդների կողմից: Լինելով ամենատիպական և օրինակելի կենտրոններից մեկը՝ այսօր

մտավոր ներուժը ժամանակակից կրթական և մշակութային օջախներում շարունակում է զարգացման ու կայացման գործընթացը՝ դիմակայելով դարի նոր մարտահրավերներին: Մեր ուսումնասիրության կենտրոնում մեծահասակների կրթության ժամանակակից հիմնահարցերն են Սյունիքի տարածաշրջանում:

2017–2018 ուստարում «Մանկավարժություն և սոցիոլոգիա» ԲԿԺ-ի 4-րդ կուրսում մեր կողմից դասավանդվել է «Անդրագոգիկա» դասընթացը: Դասընթացի շրջանակներում ուսանողները բաժանվել են խմբերի (ըստ բնակության վայրերի) և ստացել համապատասխան առաջադրանքներ. ուսումնասիրել և իրականացնել սոցիոլոգիական հարցումներ՝ պարզելու իրենց մարզերում մեծահասակների կրթության ժամանակակից հիմնահարցերը՝ ոչ ֆորմալ կրթության և ինֆորմալ կրթության հարթակներում: Իսկ հետազոտության արդյունքները ուսանողների հետ համատեղ վերլուծել և ամփոփել ենք դասընթացի վերջում: Իհարկե, մեկ հոդվածի սահմանում անհնար է ամբողջությամբ ներկայացնել ՀՀ տարբեր մարզերի համեմատական պատկերն այս հիմնախնդրի առնչությամբ, սակայն Սյունիքի տարածաշրջանի վերաբերյալ ստացած էմպիրիկ նյութի վերլուծությունը և արդյունքները կմեկնաբանենք հանգամանալից:

Գաղտնիք չէ, որ այսօր մեր հասարակությունը **դպրոց + բուհ** մոդելից անցում է կատարել **«կրթություն ողջ կյանքի ընթացքում» կամ «ցկյանս»** մոդելին: Մեր երկրում ոչ ֆորմալ կրթության կարևորությունը պետականորեն ճանաչելու երաշխիք է 2009 թ. ՀՀ կառավարության կողմից պաշտոնապես ընդունված «Ցկյանս ուսումնառության հայեցակարգը», որում ներառված են ոլորտի հիմնական գործառույթները, խնդիրները, ինչպես նաև դրանց լուծման հնարավոր ուղիները [3: 98]: Նախ փորձենք մեկնաբանել, թե ինչ ենք հասկանում ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթություն ասելով:

Ոչ ֆորմալ կրթությունը *կրթության լրացուցիչ ուսուցման ծրագիր կամ ծրագրերի ամբողջություն է, որն իրականացվում է համապատասխան ուսումնական հաստատության (հաստատությունների) կամ այդ գործառույթն իրականացնելու իրավասությունն ունեցող կազմակերպության և (կամ) ծառայության միջոցով, սակայն չի հանգեցնում որակավորման աստիճանի շնորհման և ուսումնառության արդյունքների պաշտոնական ճանաչման՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերի:*

Ինֆորմալ կրթությունը *անձի ընտանեկան առօրյա կյանքի, հանգըստի, ժամանցի, աշխատանքային գործունեության ընթացքում ձեռք բերված ուսումնառության արդյունքն է, որը, որպես կանոն, կանխամտածված չէ անձի կողմից որպես նպատակային ուսումնառություն, կազմակերպված և համակարգված չէ ժամանակի կամ ռեսուրսների առումով, չի հանգեցնում արդյունքների պաշտոնական ճանաչման՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի* [6]:

Ֆորմալ կրթությունը իրականանում է կրթական համակարգի միջոցով, մեծահասակի պարագայում ժամանակակից ՏՀՏ-ի և կրթական տեխնոլոգիաների շնորհիվ մեծահասակը գիտակցում, յուրացնում և կառողանում է արդյունավետ լուծել սեփական խնդիրները՝ հարմարվելով ժամանակակից կյանքի պայմաններին [4: 29]:

Պետք է փաստել, որ 2011թ. «Մեծահասակների կրթություն և ուսումնառություն ողջ կյանքի ընթացքում» հասարակական կազմակերպության ծրագրերից մեկի շրջանակներում Հայաստանում առաջին անգամ իրականացվեց մեծահասակների կրթության բնագավառում վերլուծական հետազոտություն: Պարզվեց, թե ՀՀ բոլոր մարզերում բնակչության քանի տոկոսն է մասնակցել այդ ուսումնառությանը, ուսումնասիրվեց ոչ ֆորմալ կրթության ֆինանսավորման հարցը, բացահայտվեցին այն հիմ-

նական դրդապատճառները, որոնցով պայմանավորված՝ ունկնդիրները մասնակցել են դասընթացներին:

21-րդ դարում հասարակության սոցիալական զարգացումը, հասունացումը, հարմարումը և արդյունավետ ինտեգրումը սոցիումի մեջ հնարավոր են միայն անընդհատ ուսումնառության պարագայում, որը ոչ միայն երաշխիք է բարեկեցիկ ապագայի, այլև իբրև ներքին գործընթաց ողջ կյանքում ուղեկցելու է սուբյեկտին՝ կայանալու կրթության հենքի վրա: Մարդն իր կենսագործունեության ընթացքում կատարում է երկու հիմնական գործառույթ՝ մասնագիտական-անձնային զարգացում և հարմարում անընդհատ փոփոխվող իրավիճակներում [5: 38]:

Այսպիսով՝ ինչպես նշել ենք վերևում, մեր հոդվածի դիտակետում են Սյունիքի տարածաշրջանում մեծահասակների կրթությանն առնչվող գործընթացը, առկա խնդիրները, իրավիճակը, լուծման ուղիները և հաջորդական քայլերը, որոնք նպաստելու են այդ գործընթացի արդյունավետության բարձրացմանը: Հետազոտությունն ընդգրկել է Կապան, Գորիս, Մեղրի և Սիսիան քաղաքները: Ընդհանուր առմամբ մասնակցել են շուրջ 120 քաղաքացի, սոցիոլոգիական հարցումները՝ համապատասխան փուլերով և գործիքակազմով, իրականացրել են հինգ ուսանող: Առանձնացվել և սահմանվել են հիմնահարցը՝ «**Մեծահասակների կրթության կազմակերպման առանձնահատկությունները և առկա խնդիրները Կապան (Գորիս, Մեղրի, Սիսիան) քաղաքի օրինակով»,** ապա՝ օբյեկտը, առարկան, նպատակը, խնդիրները, վարկածները, մեթոդի հիմնավորումը, հիմնական հասկացությունները, թիրախային խմբերը, տվյալների վերլուծությունը:

Նշենք, որ ուսանողներն ուսումնասիրել էին Մեղրու համայնքը, որտեղ արդեն մի քանի տարի գործում է **«Մեղրու կանանց ռեսուրս կենտրոն» ՀԿ**-ն, որը ակտիվ գործող միակ հասարակական կազմակերպությունն է: Այն իր գործունեության 9 տարիների ընթացքում ՄԿՌԿ ՀԿ-ն իրականացրել է 17 բազմաբովանդակ ծրագրեր, որոնք ուղղված են եղել

կանանց և երիտասարդների կարողությունների զարգացմանը, նրանց ներգրավմանը համայնքային հիմնախնդիրների լուծման գործընթացներին, տարածաշրջանում մեդիա ոլորտի և տուրիզմի զարգացմանը, շրջակա միջավայրի պաշտպանության և առողջ ապրելակերպի խնդիրներին: Ըստ ոլորտների ՄԿՈՒԿ ՀԿ-ն գրանցել է մի շարք հաջողություններ, որոնցից են.

- **ՀԿ- ՏԻՄ համագործակցություն**.
- **Հմտությունների և կարողությունների զարգացման դասընթացներ:**

Համակարգչային հմտություններ, անգլերեն սկսնակների համար, անգլերենի ակումբ, դիտորդների վերապատրաստում, սեմինարներ նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատություններում երեխաների սննդի կազմակերպման սանիտարական նորմերի մասին, ձեռնարկատիրության զարգացման դասընթացներ, խորհրդատվություններ բիզնեսում ներգրավված և բիզնես սկսել ցանկացող կանանց համար, սեմինարներ սպասարկման ոլորտի ներկայացուցիչների համար, ասեղնագործության, ժապավենագործության, կարուձևի, սեղանի ձևավորման, կարպետագործության դասընթացներ: Ձեռք բերած հմտությունները կանանց համար դարձել են եկամտի աղբյուր: ՀԿ-ի աջակցությամբ վաճառվել է 675 000 դրամ ընդհանուր արժողությամբ 95 կարպետ, ստեղծվել են նոր նմուշներ:

Ընդհանուր առմամբ ստացած հմտությունների արդյունքում՝

33 կին ընդունվել է աշխատանքի, **73-ը** պահպանել են իրենց աշխատատեղերը, **4** կին նոր բիզնես է սկսել:

- **Մեդիա ոլորտ՝ meghrinews.com** էլեկտրոնային լրատվամիջոցի ստեղծում և զարգացում:
- **Շրջակա միջավայրի պահպանության ոլորտ**:
- **Տուրիզմի զարգացման ոլորտ**:

Ծրագրային գործունեությանը զուգընթաց ՄԿՌԿ ՀԿ-ն իրականացրել է համայնքային երիտասարդական, մանկական, ուսուցողական բազմաթիվ միջոցառումներ, կամավորական նախաձեռնություններ, հանդիպումներ ու քննարկումներ [2]:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, բավական ակտիվ է գործում ռեսուրս կենտրոնը, որը միտված է բացահայտելու կանանց և երիտասարդների ներքին դրդապատճառները և հնարավորինս ուղղորդելու դեպի աշխատաշուկա և **«հաջողակ կին»** կամ **«ձեռներեց կին»** մոդելը:

Իհարկե, նմանօրինակ ռեսուրս կենտրոններ կան նաև Սյունիքի մարզի մյուս քաղաքներում ևս, սակայն ուսանողներն այնտեղ անկետավորում են իրականացրել տեղեկատվության օբյեկտիվության տեսանկյունից՝ որպես թիրախային խումբ ընտրելով պետական ու ոչ պետական կառույցում աշխատող 30 և գյուղատնտեսությամբ զբաղվող 15 մարդու: Այսպիսով՝ հարցման մասնակիցները 45-ն են (հարցաթերթիկի նմուշօրինակը կիրառվել է հարցման ընթացքում) (Տե՛ս *Աղյուսակ 1*): Թիրախային խմբի մեջ չեն ներգրավվել ուսանողները, քանի որ նրանք, անընդհատ կրթություն ստանալով, որոշակիորեն իրացնում են իրենց կրթական պահանջմունքների նաև ոչ ֆորմալ կողմը:

Մարդու կյանքի պատմությունը ցույց է տալիս, որ առանց կրթության մարդը դուրս է մնում կյանքի արագընթաց ընդհանուր հոսքից, ուստի մշտապես կարևորվում է մարդու ստացած կրթությունը, հատկապես անընդհատ և շարունակական կրթությունը: Ինչ վերաբերում է մեծահասակների կրթությանը, այն իր տեղը ամրապնդել է քաղաքակիրթ և զարգացած հասարակություններում, և դրա իրականացման արդյունավետությանն են ուղղվում մեծ միջոցներ ու ջանքեր: Ինչպես գիտենք, ***կրթությունը ողջ կյանքի ընթացքում*** կոնցեպցիան անչափ կարևոր է ցանկացած բանական էակի կյանքում: Հայաստանում նույնպես առկա է պահանջարկ մեծահասակների կրթության ապահովման համար: Այդ մասին են վկայում այն հարցումները, որոնք կատարեցին ուսանողները:

Նախ նշենք ուսանողների կողմից հետազոտության նպատակի համար առաջադրված **խնդիրները.**

- պարզել, թե ինչպիսի ֆորմալ կրթական հարթակներով է ապահովվում մեծահասակների կրթությունը քաղաքում,
- պարզել, թե քաղաքում ինչպիսի ոչ ֆորմալ հարթակներ կան մեծահասակների կրթության ապահովման համար,
- որոշել, թե արդյոք մեծահասակները ունեն դրդապատճառ՝ ապահովելու իրենց շարունակական կրթությունը,
- բացահայտել շարունակական կրթության հեռանկարների հանդեպ նրանց վերաբերմունքը,
- պարզել, թե ստացված կրթությունը ինչքանով է արդյունավետ մասնագիտական գործունեության մեջ,
- ուսումնասիրել, թե մեծահասակները գոհ են, և արդյոք նրանց բավարարում են այն որակները, որ ձևավորվում են կրթության ընթացքում,
- պարզել մեծահասակների զբաղվածության ձևերը և մասշտաբները,
- բացահայտել սոցիալ-դեմոգրաֆիական գործոնների ազդեցությունը աշխատաշուկայում մեծահասակների դրսևորած ակտիվության վրա, առաջին հերթին հաշվի առնելով վերջիններիս կրթության և աշխատանքի համապատասխանությունը:

Աղյուսակ 1

Հետազոտության անկետա

Բարև Ձեզ, ես _____ եմ, սոցիոլոգ ՀՊՄՀ-ից: Այս հետազոտությունը վերաբերում է մեծահասակների կրթությանը, ուստի Ձեր անկեղծ պատասխանները անչափ կօգնեն օբյեկտիվ տեղեկություն ստանալու հարցում: Հարցումն անանուն է, անվանական տեղեկություններ

չեն հրապարակվելու, տվյալները կներկայացվեն ընդհանրացված ձևով: Կանխավ շնորհակալություն:

1. Նշվածներից որին է համապատասխանում ձեր զբաղվածությունը՝
   ա. Աշխատող պետական կառույցում,
   բ. Աշխատող մասնավոր կառույցում,
   գ. Ինքնազբաղված գյուղատնտեսությունում,
   դ. Ինքնազբաղված այլ ոլորտում ***(անցում հարց 5-ին)***,
   ե. Կենսաթոշակառու ***(անցում հարց 5-ին)***,
   զ. Գործազուրկ (փնտրում է աշխատանք) ***(անցում հարց 5-ին)***

2. ***(Եթե աշխատում է)*** Ձեր աշխատավայրում որքա՞ն հաճախ են կազմակերպվում վերապատրաստումներ:

……..

3. Ձեր աշխատավայրում որքան հաճա՞խ են կազմակերպվում թրեյնինգներ և մասնագիտական ոլորտին վերաբերող սեմինարներ:

……..

4. Ինչպե՞ս կգնահատեք այդ ամենի արդյունավետությունը, իսկ եթե չկան այդպիսիք, ապա՝ դրանց բացակայությունը:

……..

5. Ձեր շրջապատում կա՞ն հաստատություններ, որտեղ կարող եք ձեռք բերել նոր գիտելիքներ:

……..

6. Արդյոք ցանկանո՞ւմ եք ապահովելու ձեր շարունակական կրթությունը:

……..

7. Ի՞նչ եք կարծում, ո՞ր կառույցներն են պատասխանատու մեծահասակների կրթության ապահովման համար:

……..

8. Ինչպե՞ս կգնահատեք մեծահասակների կրթության իրականացման հասանելիությունը Ձեր տարածաշրջանի բնակիչների համար:

……..

9. Դրական ի՞նչ հետևանք է ունենում մեծահասակի կրթության և աշխատանքի համատեղումը:

……..

10.Համարո՞ւմ եք Ձեզ տվյալ հասարակության զարգացումներին համընթաց քայլող մարդ:

……..

11.Բավարարո՞ւմ է արդյոք Ձեր ազատ ժամանակը ինքնակրթությամբ և կրթությամբ զբաղվելու համար:

……..

12.Ձեր զբաղվածության աստիճանը թո՞ւյլ է տալիս կազմակերպել ազատ ժամանցը՝ ըստ ցանկության:


……..

13.Ձեր կարծիքով կարևո՞ր է շարունակական կրթությունը ժամանակակից մարդուն իր կենսագործունեության ճիշտ կազմակերպման համար:

……..……

1. Ձեր զբաղվածության աստիճանը թո՞ւյլ է տալիս կազմակերպել Ձեր ազատ ժամանցը՝ըստ ցանկության:

Գծապատկեր 1




Ինչպես երևում է գծապատկերից, տվյալ հարցին մեծ մասամբ պատասխանել են «ոչ» և «ավելի շուտ ոչ, քան այո», ինչը հիմնականում պայմանավորված էր հարցվողների աշխատանքային գրաֆիկով, խիստ զբաղվածությամբ և ընտանիքի առկայությամբ: «Այո» տարբերակը նշած հարցվողների 24%-ը չուներ աշխատանք և ընտանիք (Տես՝ *Գծապատկեր 1*):

2. Բավարարո՞ւմ է արդյոք Ձեր ազատ ժամանակը ինքնակրթությամբ և կրթությամբ զբաղվելու համար:

Ստացված արդյունքները, որոնք երևում են գծապատկերում, վկայում են, որ հարցվողների կեսից ավելին չունի անհրաժեշտ ազատ ժամանակը, որն էլ խոչընդոտում է ինքնակրթությամբ և կրթությամբ զբաղվելուն: Այն հիմնականում կապվում է աշխատանքային ժամերի և առօրյա խընդիրների հետ: «Ոչ» պատասխանողների մեջ գերակշռում էին մայրե-

րը և ընտանիք ունեցող արական սեռի ներկայացուցիչները (Տես՝ *Գծապատկեր 2*)։

Գծապատկեր 2




3. Համարո՞ւմ եք Ձեզ տվյալ հասարակությանը համընթաց քայլող մարդ:


Հարցվողների 46%-ը իրեն համարում է հասարակության հետ համընթաց քայլող մարդ ստացած ֆորմալ կրթության, իսկ 23%-ը՝ հասարակական ակտիվ գործունեություն ծավալելու շնորհիվ։ Մյուս 28%-ը որոշակի հնարավորությունների բացակայության պատճառով ժամանակակից հասարակության հետ համընթաց քայլող անդամ իրեն չի համարում, իսկ 8%-ը ժխտում է հասարակության մեջ գոյություն ունեցող նորմերն ու արժեքները (Տես՝ *Գծապատկեր 3*)։

4. Ձեր կարծիքով կարևո՞ր է շարունակական կրթությունը ժամանակակից մարդուն իր կենսագործունեության ճիշտ կազմակերպման համար:

Գծապատկեր 3



Գծապատկեր 4



Հարցվողների 42%-ը կարևորում է շարունակական կրթությունը կյանքում կայուն տեղ ունենալու, 38%-ը՝ հասարակության ընդհանուր զարգացումից հետ չմնալու համար: 16%-ը անընդհատ կրթությունը կարևորում է մասամբ, միայն հասարակության մեջ ավելի հեշտ ինտեգրվելու համար, և միայն 4%-ը չէր կարևորում շարունակական կրթությունը՝ նշելով, որ հնարավոր է կենսագործունեություն ծավալել նաև առանց դրա (Տես՝ *Գծապատկեր 4*):

Այսպիսով ուսանողների կողմից կատարված խմբային աշխատանքի և հետազոտության արդյունքների վերլուծությամբ պարզվեց (հետազոտության առաջադրանքը, հիմնահարցի սահմանումը, աշխատանքի պլանավորումը, ընթացքը և վերլուծությունը կատարվել է համատեղ), որ մեծահասակների համար կրթությամբ և ինքնակրթությամբ զբաղվելու հիմնական պատճառ են հասարակությանը ինտեգրվելը, արագ զարգացող ժամանակակից հասարակության հետ համընթաց քայլելը, իրենց կայուն տեղն ունենալը, ինչպես նաև մասնագիտություն և համապատասխան աշխատանք ունենալը և անընդհատ կատարելագործվելը: Հարցման արդյունքների վերլուծության միջոցով հանգեցինք նաև այն եզրակացության, որ մեծահասակների կողմից նախապատվությունը ավելի շատ տրվում է ոչ ֆորմալ կրթությանը և ինքնակրթությանը՝ չնայած այն հանգամանքին, որ ֆորմալ կրթությունը կրում է հարաբերականորեն ավելի կայուն բնույթ: Պետք է նշենք, որ ներկայումս գոյություն ունեն ժամանակակից մի շարք էլեկտրոնային հարթակներ, որոնց գործունեությունն ուղղված է հիմնականում մեծահասակների կրթության վերաբերյալ տարվող աշխատանքների լուսաբանմանը, համապատասխան հմտությունների զարգացմանը մեծահասակ սովորողի մոտ և նրանց ինտեգրմանը սոցիումի մեջ: Օրինակ՝ https://www.skill.am, https://www.boon.tv:

Այսպիսով՝ մեծահասակների կրթության և ինքնակրթության հիմնախնդրի լուծման նպատակով անհրաժեշտ է իրականացնել համալիր աշխատանքներ հասարակական կյանքի տարբեր ոլորտներում, անհրա-

ժեշտ է ստեղծել համապատասխան պայմաններ նրանց կրթության իրականացման, ինչպես նաև կրթություն-աշխատանք համատեղման համար: Անհրաժեշտ է, որ մարզպետարանները, քաղաքապետարաններն անընդհատ մշտադիտարկում անցկացնեն և վերլուծեն ժամանակակից աշխատաշուկայի պահանջները, ուսումնասիրեն միջազգային փորձը, վեր հանեն մարզի կամ քաղաքի առանձնահատկություններով պայմանավորված մարդկանց կրթական կարիքները և այն տրամադրեն համապատասխան Տարածքային զբաղվածության կենտրոններին՝ ակտիվ համագործակցելով տարբեր **ՀԿ**-ների հետ: Հետևապես պետք է ստեղծվի համակարգ՝ անհրաժեշտ պայմաններով, ենթակառուցվածքներով, համապատասխան հարթակներ՝ մեծահասակների համար ապահովելու հասանելի կրթություն:

ЛИТЕРАТУРА

1. ՀՀ Սովետական հանրագիտարան: – Երևան, 1984: – Հատ. 10: – Էջ 476:
2. Մեղրու Կանանց Ռեսուրս Կենտրոն ՀԿ [Электронный ресурс]. – Режим доступа: http://meghri-wrc.blogspot.am/p/blog-page_7324.html (Дата обращения: 03.12.2019г.).
3. *Սարգսյան Ա.* Մեծահասակների կրթության մեթոդներ և գործողություններ (մենագրություն): – Երևան, 2016: – Էջ 35:
4. *Громкова М.Т.* Андрагогика теория и практика образования взрослых. – М., 2005. – с. 29.
5. *Колесникова И.А.* Основы Андрагогики. – М., 2003. – с. 38.
6. Официальный сайт Министерства образования, науки, культуры и спорта РА [Электронный ресурс]. – Режим доступа: http://escs.am/am (Дата обращения: 03.12.2019г.).

ՄԵԾԱՀԱՍԱԿՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ

Ա.Հ. Դալլաքյան
dallaqyanarmine40@aspu.am

Մ.գ.թ., Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի մանկավարժության ամբիոնի դասախոս, սկզբնական կրթության ֆակուլտետի դեկանի տեղակալ՝ ուսումնական գծով Երևան, Հայաստանի Հանրապետություն

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում ներկայացված է Սյունիքի մարզը՝ իբրև խոշոր կրթամշակութային կենտրոն՝ 5-րդ դարից սկսած մինչև մեր օրերը: Վերլուծության են ենթարկվել մեծահասակների ոչ ֆորմալ կրթության խնդիրները հետևյալ քաղաքներում՝ Մեղրի, Ղափան, Գորիս և Սիսիան:

Բանալի բառեր՝ մեծահասակ, ֆորմալ կրթություն, ոչ ֆորմալ կրթություն, ինֆորմալ կրթություն, հարցում, ազատ ժամանց:

MODERN PROBLEMS OF ADULT EDUCATION IN THE PROVINCE OF SYUNIK IN THE REPUBLIC OF ARMENIA

A. Dallakyan
dallaqyanarmine40@aspu.am

PhD of Pedagogical Sciences, Lecturer at the Department of of Pedagogy, Associate dean for academic affairs of primary education faculty Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan Yerevan, Republic of Armenia

ABSTRACT

In the article Syunik is presented as a large cultural center dating back to the 5th century to the present day. The analysis was conducted of the existing problems of adult education on the examples of the cities of the province: Meghri, Kapan, Goris, Sisian.

Keywords: adult, formal education, non-formal education, informal education, leisure, survey.

Информация о статье:
статья поступила в редакцию 19 января 2020 г.,
подписана к печати в номер 5 (9) / 2020 – 20.02.2020 г.